ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03-Ա01

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի 27.02.2025թ. նիստի

ք.Երևան

27.02.2025թ.

Նիստին մասնակցում էին Դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը (նիստի նախագահ), դիտորդ խորհրդի անդամներ Վարազդատ Ասատրյանը, Խաչատուր Ղահրամանյանը, Վահրամ Ապրեսյանը, Գարիկ Մկրտչյանը, Լևոն Պետրոսյանը, Խաչիկ Նազարյանը և տնօրեն Անդրանիկ Ելինյանը (նիստի քարտուղար) և կարգապահական հանձնաժողովի նախագահ Արման Սարգսյանը:

Արձանագրվեց, որ քվորումն ապահովված է, և դիտորդ խորհրդը իրավազոր է անցնել օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը:

Օրակարգում ընդգրկված հարցեր՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդի 10.07.2024թ որոշումը մասնակի անվավեր ճանաչելու մասին Արմեն Հակոբյանի հայցի վերաբերյալ հարցի քննարկում /Կառավարիչ Սուսաննա Ասլանյանին վերաբերվող որոշում/:

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց հարցի էությունը: Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները: Առաջարկվեց միջնորդություն ներկայացնել դատարան՝ Սուսաննա Ասլանյանին երրորդ անձ ներգրավելու վերաբերյալ, ինչպես նաև դատարան ներկայացնել առարկություն:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդի 10.07.2024թ որոշումը մասնակի անվավեր ճանաչելու մասին Արմեն Հակոբյանի հայցով Սուսաննա Ասլանյանին որպես երրորդ անձ ներգրավելու նպատակով միջնորդությունը և առարկությունը դատարան ներկայացնելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 1. Հավանություն տալ «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի դիտորդ խորհրդի 10.07.2024թ որոշումը մասնակի անվավեր ճանաչելու մասին Արմեն Հակոբյանի հայցով Սուսաննա Ասլանյանին որպես երրորդ անձ ներգրավելու նպատակով միջնորդությունը և առարկությունը դատարան ներկայացնելուն (կատարող՝ Ա. Սարգսյան, կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող՝ Վ.Ասատրյան, կատարման ժամկետ՝ 7 օր):

2. Թիվ ՍՆԴ/1263/04/24 սնանկության գործով պահանջատեր Ս.Ծառուկյանի բողոքը սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմալյանի գործողությունների վերաբերյալ:

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց հարցի էությունը: Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները: Առաջարկվեց բողոքն ուղարկել կարգապահական հանձնաժողովին՝ սահմանված կարգով ընթացք տալու համար:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց թիվ ՍՆԴ/1263/04/24 սնանկության գործով պահանջատեր Ս.Ծառուկյանի՝ սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմալյանի գործողությունների վերաբերյալ բողոքը սահմանված կարգով ընթացք տալու համար կարգապահական հանձնաժողովին ուղարկելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 2. Հավանություն տալ թիվ ՍՆԴ/1263/04/24 սնանկության գործով պահանջատեր Ս.Ծառուկյանի՝ սնանկության գործով կառավարիչ Բաբկեն Եկմալյանի գործողությունների վերաբերյալ բողոքը սահմանված կարգով ընթացք տալու համար կարգապահական հանձնաժողովին ուղարկելուն (կատարող՝ Ա.Ելինյան, կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող՝ Գ.Մկրտչյան, կատարման ժամկետ՝ 3 օր):

3. ՀՀ սնանկության դատարանի ԵԷԴ/0132/04/16 06.02.2025թ. որոշման քննարկում /կառավարիչ Հովհաննես Սողոմանյան/:

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց հարցի էությունը: Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները: Առաջարկվեց որոշումն ընդունել ի գիտություն և ուղարկել կարգապահական հանձնաժողովին:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց որոշումն ի գիտություն ընդունելուն և կարգապահական հանձնաժողովին ուղարկելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 3. Հավանություն տալ որոշումն ի գիտություն ընդունելուն և կարգապահական հանձնաժողովին ուղարկելուն (կատարող՝ Ա. Ելինյան, կատարման ժամկետ՝ 3 օր):

4. «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի քննարկում՝ «Արտյոմ-Արտուշ եղբայրներ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և փորձաքննության ծախսի վճարները փորձագիտական ընկերությանը հատուցելու վերաբերյալ /սնանկության գործով կառավարիչ Ջիվանշիր Աֆյան/:

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց հարցի էությունը: Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները: Առաջարկվեց բողոքաբերին գրավոր հայտնել, որ բողոքը ուղարկվել է կարգապահական հանձնաժողով՝ սահմանված կարգով ընթացք տալու համար:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց բողոքը սահմանված կարգով ընթացք տալու համար կարգապահական հանձնաժողով ուղարկված լինելու մասին բողոքաբերին գրավոր ծանուցելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 4. Հավանություն տալ բողոքը սահմանված կարգով ընթացք տալու համար կարգապահական հանձնաժողով ուղարկված լինելու մասին բողոքաբերին գրավոր ծանուցելուն հավանություն տալու մասին հարցին (կատարող՝ Ա. Ելինյան, կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող՝ Վ.Ապրեսյան, կատարման ժամկետ՝ 3 օր):

5. Կառավարիչների վերապատրաստման դասընթացների ծրագրի քննարկում:

Տիգրան Սահակյանը ներկայացրեց հարցի էությունը: Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները: Տիգրան Սահակյանը հայտնեց, որ հարցը ներկայացվել է բոլոր կառավարիչներին, որևէ մեկից առաջարկություն չի ստացվել:

Տիգրան Սահակյանն առաջարկեց յուրաքանչյուր խորհրդի անդամ, տնօրենը և կարգապահական հանձնաժողովի նախագահը վերապատրաստման ծրագրում ներառելու համար մեկշաբաթյա ժամկետում Արման Սարգսյանին ներկայացնեն առնվազն տասական թեմաներ՝ դրանք ամփոփելու և վերապատրաստման ծրագիրը խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար:

<u>Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց</u> Տիգրան Սահակյանի առաջարկին հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

<u>Որոշում 5</u>. Հավանություն տալ Տիգրան Սահակյանի առաջարկին (յուրաքանչյուր խորհրդի անդամ, տնօրենը և կարգապահական հանձնաժողովի նախագահը վերապատրաստման ծրագրում ներառելու համար մեկշաբաթյա ժամկետում Արման Սարգսյանին ներկայացնեն առնվազն տասական թեմաներ՝ դրանք ամփոփելու և վերապատրաստման ծրագիրը խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար) (կատարող՝ խորհրդի անդամներ, տնօրեն և կարգապահական հանձնաժողովի նախագահ, կատարման ժամկետը՝ 7 օր, ներկայացված առաջարկները ամփոփող՝ Ա.Սարգսյան, կատարման ժամկետ՝ 10 օր, կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող՝ Տ.Սահակյան):

6. ՀՀ սնանկության դատարանի նախագահ Գ.Հովհաննիսյանի 24.01.2025թ. թիվ ԴԴԱ-6 4405/25 գրության քննարկում:

Տիգրան Սահակյանը ներկայացրեց հարցի էությունը: Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները: Առաջարկվեց գրությամբ բարձրացված թեման ներառել վերապատրաստման ծրագրում:

<u>Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց</u> ՀՀ սնանկության դատարանի նախագահ Գ.Հովհաննիսյանի 24.01.2025թ. թիվ ԴԴԱ-6 4405/25 գրությամբ բարձրացված թեման վերապատրաստման ծրագրում ներառելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

<u>Որոշում 6</u>. Հավանություն տալ ՀՀ սնանկության դատարանի նախագահ Գ.Հովհաննիսյանի 24.01.2025թ. թիվ ԴԴԱ-6 4405/25 գրությամբ բարձրացված թեման վերապատրաստման ծրագրում ներառելուն (կատարող՝ Ա.Սարգսյան, կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող՝ Տ.Սահակյան):

7. «Սնանկության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Վահագն Ավագյանի, Արգամ Խաչատրյանի, Գարիկ Մկրտչյանի և Խաչիկ Նազարյանի կողմից ներկայացված առաջարկությունների քննարկում:

Տիգրան Սահակյանը ներկայացրեց հարցի էությունը, հայտնեց, որ կառավարիչների կողմից նման առաջարկների ներկայացումը ողջունելի է: Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները: Առաջարկվեց կառավարիչներին տեղեկացնել, որ օրենքի

փոփոխություններին առնչվող իրենց առաջարկները կարող են ներկայացնել օրենքի նախագծի քննարկման ժամանակ՝ որպես նախագծի լավարկման վերաբերյալ առաջարկներ:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց օրենքի փոփոխություններին առնչվող իրենց առաջարկները օրենքի նախագծի քննարկման ժամանակ՝ որպես նախագծի լավարկման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու մասին կառավարիչներին տեղեկացնելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 7. Հավանություն տալ օրենքի փոփոխություններին առնչվող իրենց առաջարկները օրենքի նախագծի քննարկման ժամանակ՝ որպես նախագծի լավարկման վերաբերյալ առաջարկներ ներկայացնելու մասին կառավարիչներին տեղեկացնելուն (կատարող՝ Տ.Սահակյան):

8. Սնանկության գործերը ավարտելու վերաբերյալ կառավարիչ Արտակ Հարությունյանի կողմից ներկայացված նյութի քննարկում

Վահրամ Ապրեսյանը ներկայացրեց հարցի էությունը: Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները, ովքեր մասնավորապես հայտնեցին, որ դիտորդ խորհուրդը այդ մասով պարզաբանում տալու իրավասություն չունի, նման իրավասություն կարող է ունենալ համապատասխան պետական կառավարման մարմինը: Առաջարկվեց Արտակ Հարությունյանին գրավոր առաջարկել պարզաբանում ստանալու համար դիմել համապատասխան պետական կառավարման մարմնին:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց պարզաբանում ստանալու համար համապատասխան պետական կառավարման մարմնին դիմելու վերաբերյալ Արտակ Հարությունյանին գրավոր առաջարկ ներկայացնելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 8. Հավանություն տալ պարզաբանում ստանալու համար համապատասխան պետական կառավարման մարմնին դիմելու վերաբերյալ Արտակ Հարությունյանին գրավոր առաջարկ ներկայացնելուն (կատարող՝ Ա. Ելինյան, կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող՝ Խ. Ղահրամանյան):

9. Սնանկության գործով կառավարիչների կողմից անդամավճարների չվճարելուն և պարտքերին վերաբերվող հարցի քննարկում:

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց հարցի էությունը, հայտնեց, որ որոշ կառավարիչներ ունեն անդամավճարների գծով չկատարված պարտավորություններ: Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի բոլոր անդամները: Արձանագրվեց, որ ինքնակարգավորվող կազմակերպությունը ունի ֆինանսական միջոցների կարիք՝ կառավարիչների վերապատրաստման նպատակով նորմալ մասնագետներ ներգրավելու, ինչպես նաև կանոնադրությամբ կազմակերպության առջև դրված խնդիրներն իրագործելու համար: Նման պայմաններում, առավել ևս, անթույլատրելի է անդամավճարների չվճարումը: Ներկաներն արձանագրեցին, որ կանոնադրությունը նման դեպքերի համար նախատեսում է պատասխանատվություն:

Առաջարկվեց հանձնարարել կարգապահական հանձնաժողովին տնօրենի հետ համատեղ նախապատրաստել կառավարիչներին ուղղված նամակ, անհատապես ծանուցել բոլոր պարտավորություն ունեցող կառավարիչներին՝ պարտավորությունների կատարման համար տրամադրելով երկշաբաթյա ժամկետ, իսկ նշված ժամկետում պարտավորությունը չկատարելու դեպքում հարուցել կարգապահական վարույթ:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց պարտավորությունները չկատարած կառավարիչներին պարտավորություններն ամբողջությամբ կատարելու մասին գրավոր ծանուցում ուղարկելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 9. Հավանություն տալ պարտավորությունները չկատարած կառավարիչներին պարտավորություններն ամբողջությամբ կատարելու մասին գրավոր ծանուցում ուղարկելուն (գրավոր ծանուցման տեքստի նախապատրաստողներ՝ Ա.Սարգսյան և Ա.Ելինյան, ծանուցումներն ուղարկող՝ Ա.Ելինյան):

10. Գագիկ Բարխուդարյանի պարտքին վերաբերվող հարցի քննարկում:

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց հարցի էությունը, հայտնեց, որ այդ պարտավորությունը անդամավճարների գծով պարտավորություն է: Ներկաները կարծիք հայտնեցին, որ անդամավճարի գծով պարտավորությունը դադարում է անձի մահվան փաստով: Առաջարկվեց այդ պարտավորությունը դուրս գրել:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց Գագիկ Բարխուդարյանի պարտավորությունը դուրս գրելուն և համապատասխան հաշվապահական ձևակերպումներ տալուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 10. Հավանություն տալ Գագիկ Բարխուդարյանի պարտավորությունը դուրս գրելուն և համապատասխան հաշվապահական ձևակերպումներ տալուն (կատարող՝ Ա.Ելինյան):

11. Աճուրդի կարգի փոփոխությունների նախագծի քննարկում:

Տիգրան Սահակյանը ներկայացրեց հարցի էությունը, հայտնեց, որ խորհրդի անդամներ Վարազդատ Ասատրյանի և իր կոմից մշակվել է նշված նախագիծը, որն ուղարկվել է կառավարիչների քննարկմանը: Ներկաները կարևորեցին կարգում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը և հավանություն հայտնեցին ներկայացված նախագծին: Տիգրան Սահակյանը հայտնեց, որ նախագիծը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն, եթե կլնեն առաջարկություններ, կարող են լրացուցիչ գրությամբ դրանք ներկայացնել քննարկման փուլում:

Առաջարկվեց հավանություն տալ ներկայացված նախագծին:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց աճուրդի կարգում փոփոխություն կատարելու մասին նախագծին հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 11. Հավանություն տալ աճուրդի կարգում փոփոխություն կատարելու մասին նախագծին:

12. Կառավարիչ Սամվել Մանուկյանի դիմումի քննարկում:

Վահրամ Ապրեսյանը ներկայացրեց հարցի էությունը: Ներկաները դիրքորոշում հայտնեցին հարցի վերաբերյալ: Մասնավորապես նշեցին, որ վարչական ակտի՝ նախարարի հրամանի առկայության պայմաններում նշված հարցը կարող է լուծվել դատական կարգով:

Առաջարկվեց կառավարչ Սամվել Մանուկյանին գրավոր տեղեկացնել, որ հարցը կարող է լուծվել միայն դատական կարգով:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց գրությամբ բարձրացված հարցը միայն դատական կարգով լուծելի լինելու մասին Սամվել Մանուկյանին գրավոր տեղեկացնելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 12. Հավանություն տալ գրությամբ բարձրացված հարցը միայն դատական կարգով լուծելի լինելու մասին Սամվել Մանուկյանին գրավոր տեղեկացնելուն (կատարող՝ Ա.Ելինյան, կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող՝ Խ.Նազարյան):

13. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի /ՀՀ ՊԵԿ ներկայացրած/ նախագծի քննարկում:

Տիգրան Սահակյանը ներկայացրեց հարցը, հայտնեց, որ իր կողմից նախապատրաստվել է օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություն, ներկայացրեց դրա էությունը: Մասնավորապես հայտնեց, որ եթե օտարումից առաջացող հարկերը ընդգրկվեն ոչ թե առաջնահերթության «ա» խմբում, այլ «ա» խմբից հետո՝ նոր «ա.1» խմբում, ապա նման մոտեցումը կառավարիչների վարձատրության մասով խնդիրներ չի առաջացնի, և չեն լինի իրավիճակներ, որտեղ աշխատանք կատարած կառավարիչը այդ պատճառով աշխատավարձ չի ստանա:

Ներկաները դիրքորոշում հայտնեցին և հավանություն տվեցին նման մոտեցմանը:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց նոր առաջացող հարկերը «ա» խմբից հետո նոր՝ «ա.1» խմբում ներառելու վերաբերյալ առաջարկությունը ՀՀ ՊԵԿ ներկայացնելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☐ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 13. Հավանություն տալ նոր առաջացող հարկերը «ա» խմբից հետո նոր՝ «ա.1» խմբում ներառելու վերաբերյալ առաջարկությունը ՀՀ ՊԵԿ ներկայացնելուն (կատարող՝ Տ.Սահակյան):

14. Կարգապահական հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման նպատակով հանձնաժողովի նախագահ Արման Սարգսյանին 200 հազ. դրամ գումար հատկացնելու մասին հարցի քննարկում:

Տիգրան Սահակյանը ներկայացրեց հարցը, մասնավորապես հայտնեց, որ հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ են գրասենյակային և այլ ծախսեր, որը, ըստ էության, կատարվում է հանձնաժողովի նախագահի անձնական միջոցներից, ինչը արդարացի չէ: Առաջարկեց այդ ծախսերի համար հատկացնել գումար: Ներկաները դիրքորոշում հայտնեցին և հավանություն տվեցին մոտեցմանը: Արձանագրվեց, որ գումարը նախատեսվում է տրամադրել 2025թ" ընթացքում հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու համար:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց կարգապահական հանձնաժողովի նախագահ Արման Սարգսյանին 2025թ. ընթացքում հանձնաժողովի ընթացիկ ծախսերը հոգալու նպատակով 200 հազ. դրամ հատկացնելուն հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա.

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / ☐ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / ☐ Դեմ	

Որոշում 14. Հավանություն տալ կարգապահական հանձնաժողովի նախագահ Արման Սարգսյանին 2025թ. ընթացքում հանձնաժողովի ընթացիկ ծախսերը հոգալու նպատակով 200 հազ. դրամ հատկացնելուն (կատարող՝ Ա.Ելինյան):

15. Կազմակերպության անդամ, սնանկության գործերով կառավարիչ Էդուարդ Սերոբյանի լիազորությունների դադարեցման հարցի քննարկում՝ կապված նրա մահվան հանգամանքով:

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց հարցի էությունը, հայտնեց, որ կառավարչի մահվան փաստով պայմանավորված դադարեցվում է վերջինիս անդամությունը կազմակերպությանը:

Դիտորդ խորհուրդը նշված փաստն ընդունեց ի գիտություն:

16. Առողջության կամավոր ապահովագրության հարցի քննարկում:

Տիգրան Սահակյանը հայտնեց, որ կազմակերպության անդամների, նրանց ընտանիքի անդամների կամավոր ապահովագրության հարցը քննարկել է կազմակերպության անդամ՝ կառավարիչ Արտակ Մարտիրոսյանի հետ, ով մասնագիտացված է նաև ապահովագրության ոլորտում: Քննարկուների արդյունքում Արտակ Մարտիրոսյանն ուսումնասիրել է հայաստանյան շուկայում գործող առաջարկները, ընտրել է դրանցից լավագույնը, այն ներկայացրել քննարկման:

Տիգրան սահակյանը հայտնեց, որ եթե ապահովագրությունը կատարվի մեկ կամ մի քանի հոգու դիմումի հիման վրա, ապա դրա արժեքը էականորեն բարձր է ստացվում, իսկ կազմակերպությունով (կոլեկտիվով) ապահովագրվելու դեպքում՝ մեկ անձի հաշվով վճարումն էականորեն նվազում է:

Սույն նախաձեռնության նպատակը հետևյալն է. հավաքվել ապահովագրվելու ցանկություն ունեցող կառավարիչներով և կնքել առողջության ապահովագրության պայմանագիր:

Ներկաները հավանություն տվեցին նախաձեռնությանը, որոշվեց ապահովագրության առաջարկն ուղարկել կառավարիչներին՝ ուսումնասիրելու և հետագա անելիքները որոշելու համար:

Նիստի նախագահ՝ Տիգրան Սահակյան

Նիստի քարտուղար՝ Անդրանիկ Ելինյան